

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՒՆԻԾ

Ա.

Հ Ո Ւ Ն Գ Ա Ր Ա Կ Ա Ն Դ Ա Շ Տ Ա Վ Ա Յ Ր Ը

(Petöfi Sandor-ից)

Ո՛վ դուք, կարպաթեան բիրտ սարեր, ի՞նչ էք ուզում ինձանից, ի՞նչ է ուզում ինձանից ձեր վայրենի երկիրը՝ եղևնի անտառներով ծածկուած: Ես հիանում եմ նրանց վրայ, բայց չեմ կարող սիրել, սարեր ու ձորեր չեն կարող իմ հոգին բարձրացնել:

Բայց ձեր ստորոտում, ծովի պէս միապաղաղ այդ դաշտում, ես արգէն իմ տանն եմ գտում ինձ. հոգիս, իբրև արծիւ, որ դուրս է թռչում իր բնից, ընդգրկում է անհունութիւնը:

Ես թռիչք եմ առնում եւ բարձրանում այս աշխարհից վերև, շատ բարձր, այնտեղ, ուր ամպերն են թռչում. և իմ ոտքերի տակ տեսնում եմ այն ծիծաղկոտ երկիրը՝ որ տարածւում է Թէյխից մինչեւ Դանուբ:

Կուսանիկում, երկնքի տակ, ուր խաղում է Դելիբաբը, հարիւրաւոր պարարտ հօտեր՝ իրանց բոժոժներն հնչեցնելով՝ գնում են կէսօրին, լայնատարած ջրհորների լայն աւաղանում իրանց ծարաւն յագեցնելու:

Կայտառող երիվարների խրինջիւնը հնչում է քամու մէջ. լսում է հեռուից սմբակների տոփիւնը՝ չիֆօցների (ձիարած) զուարթ աղաղակները և իրանց երկար մտրակների խլացնող շաչիւնը:

Նրճիթների մօտ, զեփիւռի քնքոյշ շունչի տակ, ցորենանների ովկէանն է օրօրւում: Յօղունները հրնկտում են *), և ամեն

*) Վանեցիների լեզուով «հրնկտալ» նշանակում է կանաչների քամու առաջ տատանելով փալկելը:

կողմ հայաբոյսերը պատում են հորիզոնը զմրուխտի կենդանի գոյներով:

Երբ երեկոն աւելի մօտ է տարածւում երկրի վրայ, վայրի բաղերը դուրս են թռչում մօտակայ շամբերից. և երբ եղէգները քամուց յուզուած սարսռում են հանդարտիկ, նրանք սոսկահար փախչում են իրանց օդային շաւիղներով:

Խրճիթներից հեռու, պոլսայի խորութեան մէջ, կանգնում է չարդան՝ առանձնացած իր փլիլկած ծխնելոյզով: Ծառաւի բէջաբները, որոնք այլեայլ ճանապարհներով դէպի չուկայ են գնում, կանգնում են այնտեղ:

Թմրիներից յած անտառների մէջ տեղ, չարդայի մօտիկ, դեղին աւաղի մէջ, թաւուտի խորքում, բոյն է դրել սրասոյլ շահէնը՝ խոյս տալով աւերիչ երեխաների ձեռքից:

Կնիւններն այնտեղ աճում են տխուր. ուղտափուշի ծաղիկները ճօճւում են և իրանց սուր փշերի ներքև խատուտիկ մողէսները թմրած պառկել են արևի տակ:

Հեռուն, ուր երկինք բոցավառ երկրի հետ միախառնուել է, պտղատու ծառերի շարքեր նայում են մշուշի միջից, որ իրանց մի ինչ-որ կապտաւուն գոյն է տալիս: Նրանցից վերև, ինչպէս մի սիւն, բարձրանում է գիւղի զանգակատունը՝ կանաչ արօտների միջից:

Հիւսնայի ես դու ինձ համար, ո՛վ դաշտավայրերի երկիր: Այդտեղ է, որ իմ օրօրոյն օրօրեցին, այդտեղ է, որ ես կեանքի մէջ մտայ: Այդտեղ է, որ մի օր պատանքն ինձ պիտի փաթաթէ և այդտեղ՝ պիտի բարձրանայ իմ մահու հողակոյտը:

Բ

Մ Ո Հ Ա Չ *)

(Kisfaludy Károly-ից)

Քեզ ողջունում եմ հառաչելով, ո՛վ Մոհաչ, ո՛վ եղբրական դաշտ՝ կարմրած մեր գիւլաղների արիւնով. մեր աղգային փառքի ընդարձակ գերեզման, ողջոյն քեզ:

Սոսկալի ապականութիւնը իր ազոաւի թեւերով տարածւում է քո վրայ. իր սոսկալի կատաղութեան մէջ նա քո վրայ

*) Հունդարական մի նշանաւոր դաշտ, ուր Հունգարիան կորցրեց իր ազատութիւնը 1526 թուին: